ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» դեկտեմբերի 2011թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԽՍՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍԱՄՍՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ
ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N551 որոշմամբ՝

**Երևան քաղաքի ավագանին *որոշում է*՝**

Տալ համաձայնություն ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մ. Մաշտոցի պողոտայի հ.39/12 շենքի ճակատային հատվածում տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակ՝

Մշակույթի, կրթության և սոցիալական
հարցերի մշտական հանձնաժողովի
նախագահի տեղակալ՝

Աննա Ասատրյան

## ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԽՍՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍԱՄՍՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի պետական կոնսերվատորիայի ռեկտոր (1937-1940), Երևանի քաղաքային սովետի նախագահի տեղակալ, Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի տնօրեն, ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի թատերաերաժշտական թանգարանի տնօրեն (1949-1954), ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ (1954-1974), սովետահայ երաժշտագետ-պատմաբան, մանկավարժ, արվեստագիտության թեկնածու Սամսոն Գասպարյանի (1909-1974) ունեցած մեծ ավանդը հայ մշակույթի և գիտության զարգացման ասպարեզում:

Անուրանալի է Ս. Գասպարյանի դերը հայ երաժշտագիտության զարգացման գործում: Նրա ջանքերի շնորհիվ 1937-ին հիմնադրվել է Երևանի պետական կոնսերվատորիայի պատմա-տեսական բաժանմունքը՝ հանրապետության երաժշտագիտական միտքն ապահովելով բարձրորակ կադրերով, իսկ նրա հեղինակած «Ալեքսանդր Սպենդիարով» (1951), «Հայկանուշ Դանիելյան» (1958), «Կոմիտաս» (1947, 1961, ռուսերեն՝ 1969) գրքերը կարևոր ներդրում դարձան հայրենական երաժշտագիտության մեջ: Ս. Գասպարյանի նախաձեռնությամբ ուսումնական պրոցեսի կատարելագործման նպատակով Երևանի պետական կոնսերվատորիայում 1939-ին ձևավորվեցին 7 ամբիոններ:

Ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի միջնորդությունը (23.04.2009)՝ Ս. Գասպարյանի հիշատակը հավերժացնելու համար (նամակը կցվում է, առդիր մեկ էջ):

Հարցը Երևանի ավագանու Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությամբ ընդգրկվել էր Երևանի ավագանու չորրորդ նստաշրջանի չորրորդ նիստի (26 նոյեմբերի, 2010) օրակարգում և հանվել օրակարգից՝ առաջիկա նիստերից մեկում քննության առնելու նպատակով:

**Նախագծի հեղինակ՝**

**Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի**
**մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝** **Աննա Ասատրյան**

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԽՍՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍԱՄՍՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

**Նախագծի հեղինակ՝**
**Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի**
**մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝** **Աննա Ասատրյան**

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԽՍՀ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԻՉ ՍԱՄՍՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամսոն Գասպարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

**Նախագծի հեղինակ՝**
**Մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի**
**մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ՝**

**Աննա Ասատրյան**